

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**Աղբառներուն ողորմութիւն ընելու մասին**

Անոնք, որ շատ հարստութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դատարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անտանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք յաիտենական յարկերուն մէջ ընդունուիք» (Դուկ. 16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Սիրոյ հետամուտ եղէք ու նաեւ նախանձախնդիր աղքատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի ստանաք» (Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թեթեւցնէ մեղքին ծանրութիւնը, բացի աղքատին տրուած ողորմութենէն եւ գութէն, ինչպէս սուրբ Դանիէլ Նաբուգոդոնոսորին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պատճառաւ հիւանդացած էր: Մարգարէին կը հարցնէր, թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ քուրճը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ՝ գնա՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւէ՛, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով: Այս արարքն է, որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաիտենական կեանք պիտի առաջնորդէ» (Դանիէլ. 4.27):

ԽՐԱՏՆԵՐ

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ՄՈՍԱՎԱՌՈՒԹԵԱՆ ԻՍՂԱՍԸ**



Մովի գործածութիւնը առհասարակ՝ հարուստ եւ խորունկ իմաստ ունի: Ծիսական կեանքին մէջ ան կը խորհրդանշէ Քրիստոս՝ աշխարհի լոյսը, որ կը հալածէ մեղքի խաւարը: Անձնական գործածութեան պարագային միշտ աղօթքը կ'ընկերանայ անոր: Պալլացող մոմը աղօթքով, մեզի միշտ կը յիշեցնէ, որ «Լոյսի եւ ցերեկի որդիներ եմք», ինչպէս Պօղոս առաքեալ կ'ըսէ (Ա. Թեղ. 5:5), պատրաստ ստեղծագործելու բարի գործեր, նման մեր արարիչ Աստուծոյ, եւ ըլլալու լոյս, հոն ուր խաւար է: Ննչեցեալի հոգւոյն, հիւանդի առողջութեան, գործի յաջողութեան համար վառուող մոմը աղօթքով, երախտագիտութեան համեստ արարք մըն է առ Աստուած, ինդրելով իր կամքին կատարումը ի լուսաւորութիւն ապրող ու զինուորագրեալ եկեղեցւոյ անդամներու սրտերուն ու մտքերուն, եւ ի հանգիստ՝ ննչող ու յաղթական եկեղեցւոյ անդամներու հոգիներուն:



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ**



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՈՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ՃԶ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 1 ՅՈՒՆԻՍԻԱՐ 2023** ԹԻԻ 1

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Ես. 51.15-52.3: Եբր. 13.18-25: Դկ. 22.24-30

**ՇՆՈՐԿՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ  
ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ 22.24-30**

Աշակերտներուն մէջ վեճ ծագեցաւ, թէ իրենցմէ ո՞վ պիտի նկատուի մեծը: Յիսուս անոնց ըսաւ. «Ազգերու թագաւորներ կը տիրեն իրենց ժողովուրդներուն վրայ եւ իշխողները բարերար կը կոչուին իրենց հպատակներուն կողմէ: Բայց ձեր պարագային այդպէս պէտք չէ ըլլայ: Ընդհակառակը, ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս: Ո՞վ է մեծը: Սեղան նստողը, թէ սպասաւորը: Անշուշտ, որ սեղան նստողը: Բայց ես ձեր մէջ սպասաւորի պէս եմ: Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններու ընթացքին եւ ես ահա կը խոստանամ թագաւորութիւն տալ ձեզի, ինչպէս Հայրս ինծի տալ խոստացաւ: Իմ սեղանէս պիտի ուտէք եւ խմէք իմ թագաւորութեան մէջ, եւ պիտի բազմիք գահերու վրայ՝ դատելու համար Իսրայէլի տասներկու ցեղերը»:

**Ձեր մէջէն ամենէն մեծը թող ամենէն պզտիկին պէս ըլլայ, եւ առաջնորդը՝ սպասաւորին պէս**

Մեր Տէր Յիսուսի խօսքն է եւ յորդորը, որ տարօրինակ կը թուի անոնց, որոնք հեռու են Քրիստոսի սէրէն եւ հայրական գութէն: Ընդհանուր մարդկութիւնը կ'ըմբռնէ մեծութեան իմաստը հետեւեալ հասկացողութեամբ մեծ կը նկատէ այն անձերը, որոնք հանգամանքի կամ պաշտօնի կամ այլ տարբեր դիրքի վրայ գտնուողները: Սակայն Քրիստոս մեզի շատ պարզ ձեւով կը փոխանցէ մեծութեան իմաստը: Մեծութիւնը անմեղութեան ու անկեղծութեան մէջ է եւ այս իմաստով կ'ըսէ՝ պէտք է փոքրերու հոգի ունենալ մեծ դառնալու համար, նաեւ առաջնորդ դառնալու համար պէտք է սպասաւոր ըլլալ: Առաջնորդ Քրիստոսը սպասաւորեց ժողովուրդին իր խոնարհութեամբ ու հեզութեամբ: Ապրիմք Քրիստոսի խօսքերով եւ այդ խօսքերը թող դառնան մեր կեանքի ուղեցոյցը:

**ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ**  
**ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան**

ԾՆՈՒՆԳ ՅԻՍՈՒՄԻ



Մատթեոսի եւ Դուկասի Աւետարանիչները կը ներկայացնեն Յիսուսի Ծնունդը իր յարակից դէպքերով:

Օգոստոս կայսրի հրամանագիրը՝ մարդահամար կատարելու համար, Բեթղեհեմի մէկ համեստ մտուրի մէջ Մարիամի ծննդաբերութիւնը, հրեշտակներու փառաբանման երկինքի անհունին մէջ, հովիւներուն այցը ծնեալ Փրկչին, մոգերու այցելութիւնը, Բեթղեհեմի մանուկներուն ջարդը, Բաղաստի տանար ընծայումը, եւ դէպի Եգիպտոս փախուստը:

Յիսուս մանուկի Ս. Ծննդեան եւ անոր մանկութեան առնչակից դէպքերն են ասոնք՝ յիշատակուած Ս. Աւետարանին մէջ:

Հայ Եկեղեցին Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը՝ որ է Աստուածայայտնութիւնը, միասնաբար կը տօնէ:

Առաջինը՝ մարգարէներուն կողմէ գուշակուած Բանին մարմնացումն է, իսկ երկրորդը՝ անոր աստուածային բնութեան Բաղաստի մարմնացումը՝ Հօր Աստուծոյ կնիւմով եւ Ս. Հոգիին աղանակերպ էջֆով:

Ի՞՞՞՞՞՞ Է ԱՄԱՆՈՐԻ ՏՕՆԱԾԱՌԸ

Պատասխան.- Ամանորը կամ Նոր տարին հայերը կը կոչեն նաեւ կաղանդ: Այս բառէն է «Կաղանչէք»ը, որ կը նշանակէ կաղանդի առթիւ տրուած նուէր: Կաղանչէքի հասկացողութիւնը կուգայ թերեւս Եդեմական պարտէզէն: Որպէս նոր դարաշրջանի սկիզբ, մեր նախահայրը ամէն ինչ որպէս նուէր ստացաւ, թէ՛ կեանքը, թէ՛ միտքը, թէ՛ ընտանիքը: Եդեմական պարտէզին մէջ ծառ մը կար՝ Կենաց (կեանքի) ծառը, որը վաղ թէ ուշ պիտի ճաշակէր Ադամ: Բայց ան նախընտրեց ուրիշ ծառ՝ իմաստութեան ծառը: Այդ ընտրութիւնով ալ կենաց ծառը դարձաւ ամենամատչելի եւ երանելի բաղձանք մարդկութեան համար: Մարդկութիւնը բոլոր ժամանակներուն մէջ երազեր է այդ ծառին մասին: Ամանորի տօնածառը մէկ փոքրիկ յուշ է այն նուիրական ծառին, որ կորցրեց մարդկութիւնը: Այս պատճառով է, որ Քրիստոնէայ երկիրներուն մէջ այս ծառը կոչուեր է նաեւ Ծննդեան ծառ: Ծննդեան օրերուն, երբ նոր տարի մը կը բացուի մեր առջեւ, մենք ցանկութիւնը կ'ունենանք նորէն վերագրուելու այդ կորցրած ծառը՝ կենաց ծառը: Խորհրդաւորաբար ծննդեան ծառը կապուեր է կենդանի կենաց ծառին՝ Յիսուս Քրիստոսի հետ: Այսինքն, Եդեմական պարտէզի կենաց ծառը Ամանորի տօներուն նոյնն է ծննդեան կենդանի ծառի՝ Յիսուս Քրիստոսի հետ: Եւ ինչպէս մոգերը իրենց ընծաները բերին Մանուկին առջեւ, այդպէս ալ մենք կը ձգտինք մեր ընծաները բերել Կենդանի ծառին՝ զարդարելով տօնածառը:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ԱՄԱՆՈՐ

Հ Ո Գ Ե Ւ ՈՐ Պ Ա Տ Գ Ա Ս

ԻՍԿԱԿԱՆ ՆՈՐ ՏԱՐԻ

Դարձեալ Նոր Տարուան մը սեմին ենք: Եւ հարց կու տամ, թէ՛ ի՞նչն է որ տարին կ'ընէ «նոր»: Իսկական Նոր Տարին կը սկսի միայն այն ատեն, երբ Աստուած շնորհէ մեզի «նոր սիրտ» ու «նոր հոգի» (Եգ. 36.26): Չկայ Նոր Տարի առանց սրտի ու հոգիի նորոգութեան: Չկայ Նոր Տարի առանց Քրիստոսով նոր մարդ դառնալու որոշումին: «Եղէ՛ք նոր մարդ կը յանձնարարէ Աստուծոյ մարդը՝ Պօղոս» (Եփ. 4.24): Նոր Տարին կը դառնայ նոր, երբ թոյլ տանք, որ Աստուծոյ Հոգին «նոր իւղով» օծէ մեզ (Սղ. 92.10): Իւղով մը, որ իրեն հետ պիտի բերէ աստուածային օրհնութիւններ: Սիրելի՛ եղբայր եւ քոյր, քեզ կը հրաւիրեմ, որ Նոր Տարին դիմաւորես նոր որոշումով մը: Այդ որոշումը Քրիստոսի դառնալու եւ Քրիստոսի վստահելու որոշումն է:

ԱՍՏՈՒՄՏԱՆՈՒՆԵՂ

«Այգին տարին միայն մէկ անգամ պտուղ կու տայ, իսկ Աստուածաշունչը տարուան բոլոր ամիսները եւ ամսուան բոլոր օրերը պտուղ կու տայ, անդադար կերպով կենսատու վարդապետութիւն բխեցնելով զայն քննողներուն: Երբ հողը կը հնձուի՝ կը սպառի, երբ պտուղը կը քաղուի՝ կը վերջանայ, մինչդեռ Աստուածաշունչը միշտ կը հնձուի եւ սակայն մեկնիչներ հոն միշտ կը գտնեն հասկ իրենց համար: Աստուածաշունչին այգին ամէն օր կը քաղուի, բայց հոն երբեք ողկոյզները չեն պակսիր»:

(Եփրեմ Խուրի Ասորի)

ԵՔԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՔԷ ԿՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԿ ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՂԱՏԱՍԱՆԻՆ ՄԱՍԻՆ, Կարդա՛ ՄԱՂՍՈՍ 50

Աստուած, Տէր Աստուածը ինք՝ խօսեցաւ, եւ կոչ ուղղեց աշխարհին, արեւելքէն մինչեւ արեւմուտք:

Աստուած պիտի փայլատակէ Սիոնէն, որ կատարեալ է իր գեղեցկութեամբ: Մեր Աստուածը պիտի գայ ո՛չ թէ լուռ կերպով, այլ՝ իր առջեւէն լափող կրակով, եւ զինք շրջապատող սաստիկ փոթորիկով: Երկինք ու երկիր վկայ պիտի կանչէ, որպէսզի դատէ իր ժողովուրդը: « Իմ քովս հաւաքեցէք ինձի հաւատարիմ մարդիկը, որոնք զոհի մատուցումով ինձի հետ ուխտ կնքած են»: Եւ երկինքը պիտի հռչակէ անոր արդարութիւնը, որովհետեւ Աստուած ի՛նքն է դատաւորը:

«Լսէ՛, ո՛վ իմ ժողովուրդս, ես պիտի խօսիմ, եւ քեզի դէմ պիտի վկայեմ, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ, ես՝ Աստուածս, քո՛ւ Աստուածդ: Քու զոհերուդ համար չէ՛ որ քեզ կը հանդիմանեն, ո՛չ ալ մշտականօրէն ինձի մատուցած ողջակէզներուդ համար:

Ես պէտք չունիմ ազարակիլ ցուլերուն, ո՛չ ալ գոմերուդ նոխազներուն, որովհետեւ ի՛նչ են անտառի բոլոր կենդանիները, եւ հազարաւոր լեռներու վրայ արածող նախիրները: Բարձունքներու թռչունները եւ բոլոր վայրի կենդանիները ծանօթ են ինձի՛ կը պատկանին: Եթէ անօթեմայի՛ քեզի պիտի չըսէի, որովհետեւ ի՛նչ է աշխարհը եւ ինչ որ կայ անոր մէջ: Ես ցուլերու մի՞ս կ'ուտեմ, կամ նոխազներու արի՞ն կը խմեմ: